ակտն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Տվյալ դեպքում Հայցվորի կողմից ներկայացվել է պատվիրատուի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված հայց, հետևաբար, Դատարանի եզրափակիչ դատական ակտը՝ վճիռը, ուժի մեջ պետք է մտնի հրապարակման պահից:

IV

(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<ՄԲ ՊԱՐՏՆԵՐՍ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի՝ <<Սուրբ Աստվածամայր>> ԲԿ ՓԲԸ-ի տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի կողմից <<ՄԲ Պարտներս>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 09.10.2025 թվականին կայացված թիվ 7-Ա հրամանն (որոշումը) անվավեր ճանաչելու (վերացնել) պահանջի մասին **հայցը բավարարել.**

1.1. անվավեր ճանաչել <<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն Հովհաննես Զոհրաբյանի կողմից՝ <<ՄԲ Պարտներս>> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 09.10.2025 թվականին կայացված թիվ 7-Ա հրամանը (որոշումը):

2. <<Սուրբ Աստվածամայր>> բժշկական կենտրոն ՓԲԸ-ից հօգուտ <<ՄԲ Պարտներս>> ՍՊԸ-ի բռնագանձել 50 000.00 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Արման Օհանյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE78-DCD0-4823-8AB9 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am